Տեղեկությունների թարմացում՝ 2018

Բովանդակություն

Աշխատողների համար տեղեկություն	1
Տեղեկություն Սոցիալական ապահովության նպաստներ ստացողների համար	2
Տեղեկություն Լրացուցիչ ապահովական եկամուտ (SSI) ստացողների համար	3
Տեղեկություն Մեդիկեր ունեցողների համար	3
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	4

Այս թարմացումը նոր տեղեկություններ է ընծայում 2018թ. համար, ինչ վերաբերվում է Սոցիալական ապահովության հարկերին և նպաստներին: Օրենքի համաձայն, յուրաքանչյուր տարի որոշ թվեր ինքնաբերաբար փոխվում են, որպեսզի ծրագիրը ներդաշնակ ընթանա գների և աշխատավարձի մակարդակների հետ:

Աշխատողների համար տեղեկություն

Սոցիալական ապահովության և Մեդիկերի (Medicare) Հարկեր		
Սոցիալական Ապահովության հարկեր	***2017***	***2018***
Աշխատող/գործատու (յուրաքանչյուրը)	6.2% մինչև $127,200 կազմող եկամտից	6.2% մինչև $128,400 կազմող եկամտից
Ինքնաշխատ* * Կարող է փոխհատուցվել եկամտահարկի նախատեսություններով	12.4% * մինչև $127,200 կազմող եկամտից	12.4% * մինչև $128,400 կազմող եկամտից
Մեդիկերի հարկեր	***2017***	***2018***
Աշխատող/գործատու (յուրաքանչյուրը)	1.45% ընդհանուր հասույթից	1.45% ընդհանուր հասույթից
Ինքնաշխատ* * Կարող է փոխհատուցվել եկամտահարկի նախատեսություններով	2.9% * ընդհանուր հասույթից	2.9% * ընդհանուր հասույթից
Բարձր եկամուտ ունեցողները վճարում են նաև հավելվածական 0.9 տոկոս Մեդիկերի հարկեր՝ որոշ սահմանից ավելի հասույթների համար: Հավելյալ տեղեկություններն ստացեք Ներքին եկամտահարկի սպասարկությունից:		

Սոցիալական ապահովության և Մեդիկերի (Medicare) Հարկեր		
Աշխատանքի վարկեր Աշխատելիս դուք վաստակում եք վարկեր ի հաշիվ Սոցիալական ապահովության նպաստների: Սոցիալական ապահովության նպաստներին իրավասու լինելու համար ձեզ անհրաժեշտ է ունենալ վարկերի որոշակի քանակ: Ձեզ հարկավոր քանակը կախյալ է ձեր տարիքից եւ ձեր դիմած նպաստի տեսակից: Յուրաքանչյուր տարի դուք կարող եք ստանալ առավելագույնը չորս վարկ: Ընդհանրապես կենսաթոշակի նպաստներ ստանալու իրավասու լինելու համար պահանջվում է 40 վարկ:		
	2017	***2018***
	$1,300 վաստակում է մեկ վարկ	$1,320 վաստակում է մեկ վարկ

Տեղեկություն Սոցիալական ապահովության նպաստներ ստացողների համար

Հասույթի սահմանները		
Դաշնային օրենքի ներքո, Սոցիալական ապահովության նպաստներ ստացողները, ովքեր չեն հասել լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքին, իրավասու են ստանալու իրենց բոլոր նպաստները՝ եթե իրենց հասույթը ներքևը նշված սահմաններից ցածր է: 1943-ից 1954թթ. ծնվածները լրիվ կենսաթոշակի կանցնեն 66 տարեկանին: Լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքը աստիճանաբար կբարձրանա ամեն տարի, մինչև հասնի 67 տարեկանի սահմանին՝ 1960թ. կամ ավելի ուշ ծնվածների համար:		
	2017	***2018***
Լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքի կամ ավելի տարեց	Հասույթը սահման չունի	Հասույթը սահման չունի
Լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքից փոքր	$16,920 Սահմանն անցնող յուրաքանչյուր $2-ի համար նպաստներից պահվում է $1:	$17,040 Սահմանն անցնող յուրաքանչյուր $2-ի համար նպաստներից պահվում է $1:
Լրիվ կենսաթոշակի տարիքին հասնելու տարին	$44,880 Սահմանն անցնող յուրաքանչյուր $3-ի համար նպաստներից պահվում է $1 մինչև այն ամիսը, երբ կհասնեք լրիվ կենսաթոշակի տարիքին:	$45,360 Սահմանն անցնող յուրաքանչյուր $3-ի համար նպաստներից պահվում է $1 մինչև այն ամիսը, երբ կհասնեք լրիվ կենսաթոշակի տարիքին:
Հաշմանդամության նպաստառուների հասույթի սահմաններ՝ Եթե հաշմանդամության նպաստներ ստանալիս աշխատում եք, պարտավոր եք ձեր հասույթի մասին տեղեկացնել մեզ, ինչքան էլ փոքր լինի այդ հասույթը: Կարող եք անսահմանափակ հասույթ ունենալ մինչև ինն ամիս տևող աշխատանքային փորձաշրջանում (ոչ անպայման հերթական ամիսներ), և այնուամենայնիվ ստանալ լրիվ նպաստներ: Հենց որ լրանա ձեր ինևամսյա աշխատանքային փորձաշրջանը, մենք կորոշենք, որ արդյո՞ք դեռևս իրավասու եք հաշմանդամության նպաստների: Թերևս նաև իրավասու լինեք այլ աշխատանքային խթանների, որպեսզի օգնեն, որ աշխատանքի վերադառնաք:		

Տեղեկությունների թարմացում՝ 2018

Հասույթի սահմանները		
	2017	***2018***
Նկատառելի հասութաբեր գործունեություն (ոչ-կույր)	ամսական $1,170	ամսական $1,180
Նկատառելի հասութաբեր գործունեություն (կույր)	ամսական $1,950	ամսական $1,970
Աշխատանքային փորձաշրջանի ամիս	ամսական $840	ամսական $850

Տեղեկություն Լրացուցիչ ապահովական եկամուտ (SSI) ստացողների համար

Ամսական դաշնային SSI վճարումներ (առավելագույն)		
	2017	***2018***
Անահտ	$735	$750
Զույգ	$1,103	$1,125
Ամսական եկամտի սահմաններ	***2017***	***2018***
Անհատ, որի եկամուտը միայն աշխատավարձից է	$1,555	$1,585
Անհատ, որի եկամուտը աշխատավարձից չէ	$755	$770
Զույգ, որի եկամուտը միայն աշխատավարձից է	$2,291	$2,335
Զույգ, որի եկամուտը աշխատավարձից չէ	$1,123	$1,145
ԾԱՆՈԹ՝ *Եթե եկամուտ ունեք, ձեր ամսական նպաստը սովորաբար կլինի ավելի ցածր քան առավելագույն դաշնային SSI վճարումը: Հիշե՛ք. դուք պարտավոր եք մեզ հայտնել ձեր բոլոր եկամուտները: Որոշ նահանգներ փող են ավելացնում դաշնային SSI վճարման: Եթե բնակվում եք այդ նահանգներից մեկում, թերևս որակավորվեք ավելի բարձր վճարման: Ձեր եկամուտը կարող է ավելի բարձր լինել՝ քան նշված սահմանները, և դուք այնուամենայնիվ թերևս որակավորվեք:*		

Տեղեկություն Մեդիկեր ունեցողների համար

Մեդիկերի ծախքերի մեծ մասը բարձրանում է այս տարի, որպեսզի ներդաշնակ ընթանա առողջապահական ծախքերի բարձրացման հետ		
	2017	***2018***
Հիվանդանոցի ապահովագրություն (Ա մաս)		
Հիվանդանոցում առաջին 60 օրվա համար հիվանդը վճարում է	$1,316	$1,340
Հիվանդանոցում 61-րդից մինչև 90-րդ օրվա համար հիվանդը վճարում է	օրական $329	օրական $335

Տեղեկությունների թարմացում՝ 2018

Մեդիկերի ծախքերի մեծ մասը բարձրանում է այս տարի, որպեսզի ներդաշնակ ընթանա առողջապահական ծախքերի բարձրացման հետ		
Հիվանդանոցում 90 օրից հետո (մինչև հավելյալ 60 օրվա համար) հիվանդը վճարում է	օրական $658	օրական $670
Հմուտ բուժքույրական հաստատությունում առաջին 20 օրվա համար հիվանդը վճարում է	$0	$0
Հմուտ բուժքույրական հաստատությունում 21-րդից մինչև 100-րդ օրվա համար հիվանդը վճարում է	օրական $164.50	օրական $167.50
Ա մասի ապահովագին գնելու արժեքը՝ Մեդիկերի Ա մաս գնելու համար ձեր վճարած ապահովագնի գումարը կախյալ է ձեր վաստակած Սոցիալական ապահովության վարկերի քանակից: Եթե ունեք՝		
40 վարկ	$0	$0
30-39 վարկ	ամսական $227	ամսական $232
նվազ քան 30 վարկ	ամսական $413	ամսական $422
Բժշկական ապահովագրություն (Բ մաս)	***2017***	***2018***
Ապահովագին	ամսական $134	ամսական $134**
Հանելի	տարեկան $183	տարեկան $183
	Հիվանդը հանելին վճարելուց հետո, Բ մասը վճարում է ապահովագրված ծառայությունների 80 տոկոսը:	
ԾԱՆՈԹ՝ *Եթե Մեդիկեր եք ստանում և ունեք ցածր եկամուտ, թերևս ձեր նահանգը վճարի ձեր Մեդիկերի ապահովագները և, որոշ դեպքերում, ձեր հանելիներն ու կանխիկ վճարվող այլ ծախքերը: Հավելյալ տեղեկության համար դիմեք ձեր տեղական բժշկական օգնության (Մեդիկեյդ) գործակալության, սոցիալական ծառայության կամ վելֆերի գրասենյակին:*		
***Ամսական ստանդարդ ապահովագինն է՝ $134: Ավելի բարձր եկամտով որոշ անձինք վճարում են ավելի բարձր ապահովագներ:*		

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

Այցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնեություն վարելու ամենահարմար եղանակը դա մեր՝ ***www.socialsecurity.gov*** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement*

(*Սոցիալական Ապահովության հաշվետվությունը*) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;

- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Նշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը) ՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնեությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (Ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Զանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ:

Securing today and tomorrow

Social Security Administration
Publication No. 05-10003-AM | January 2018
Տեղեկությունների թարմացում՝ 2018
Update 2018 (Armenian)
Produced and published at U.S. taxpayer expense
Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին: